

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N1
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՇԵՆԻԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ԱՄՓՈՓՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

9 ՀՈՒՆԻՍԻ 2014թ.

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 77.1-77.6-րդ հոդվածների պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Սյունիքի մարզպետի 2014 թվականի մարտի 17-ի N36-Ա որոշումը, ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի աշխատանքային խմբի կողմից (խմբի ղեկավար ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՎ վարչության պետ Ս.Ավետիսյան) ՀՀ Սյունիքի մարզի Նորաշենիկ գյուղապետարանում 2014 թվականի հունիսի 9-ին իրականացվեց վարչական հսկողություն հետևյալ բնագավառներում՝

Տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների իրականացում, պաշտպանություն, հողօգտագործում, քաղաքաշինություն, առևտուր և ծառայություններ:

1. Վարչական հսկողության արդյունքների ամփոփման արդյունքում կազմվեց սույն արձանագրությունը՝ կից հավելվածով ներկայացված հայտնաբերված խախտումների, հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման ուղղությամբ առաջարկությունների, ինչպես նաև հայտնաբերված խախտումների վերացման նպատակով առաջարկվող ժամկետների վերաբերյալ:

2. Առաջարկությունները նշված ժամկետում չկատարելու դեպքում այն կբողոքարկվի դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:


3. Նորաշենիկ գյուղական համայնքի ղեկավարը վարչական հսկողության արդյունքների և վարչական հսկողությունն իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ առարկություններ չի ներկայացրել:

4. Արձանագրությունը կազմված է երկու օրինակից, որից մեկ օրինակը հանձնվում է ՀՀ Սյունիքի մարզպետարանին, իսկ մյուս օրինակը ներկայացվում է Նորաշենիկ գյուղական համայնքի ղեկավարին:

**ՀՀ Սյունիքի մարզի
համայնքներում վարչական
հսկողություն իրականացնող
աշխատանքային խմբի ղեկավար՝**

 **Ս.Ավետիսյան**

**ՀՀ Սյունիքի մարզի Նորաշենիկ
գյուղական համայնքի ղեկավար՝**

 **Ռ.Ավետիսյան**

Հավելված

ՀՀ Սյունիքի մարզի Նորաշենիկ գյուղական համայնքում
իրականացված վարչական հսկողության արդյունքների
ամփոփման վերաբերյալ
09-06-2014թ. N1 արձանագրության

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՇԵՆԻԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ
ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՀԱՅՏԱՐԵՐՎԱԾ ԽԱՆՏՈՒՄՆԵՐԸ

Դրույթների անվանումը	Պահպան ված է	Թերի է պահպանվ ած	Պահպանված չէ	Հայտնաբերված խախտումները	Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ	Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները
1	2	3	4	5	6	7
Համայնքի ավագանու կողմից ՏԻՄ օրենքի համապատասխան ընդունված իր կանոնակարգի ակադիություն	X	Թերի է պահպանված	X	Հաստատված է համայնքի ավագանու 2012-11-22 N15-Կանոնակարգը պետք է հաստատված լիներ նորմատիվ իրավական ակտով, որը չի կատարվել: Հաստատված է համայնքի ավագանու 2013-02-15 N3-Ն որոշմամբ, սակայն ՀՀ արդարադատության նախարարություն չի ուղարկված	Առաջարկվում է հաստատել նոր կանոնակարգ	Եռամսյա ժամկետում
Համայնքի ավագանու կողմից հաստատված համայնքի զարգացման ծրագրի ակադիություն	X	Թերի է պահպանված	X	Հաստատված է "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով սահմանված պահանջը	Առաջարկվում է թառամյա զարգացման ծրագիրը հաստատել օրենքով սահմանված կարգով:	Եռամսյա ժամկետում
Համայնքի ղեկավարի ներկայացմամբ կամավոր լիազորությունների իրականացման կարգի և անհրաժեշտ ֆինանսական միջոցների վերաբերյալ որոշման ակադիություն	X	X	Պահպանված չէ	Խախտվել է "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 33-րդ կետով սահմանված պահանջը	Առաջարկվում է ընդունել համապատասխան որոշում	Եռամսյա ժամկետում
Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու վերաբերյալ որոշման ակադիություն	X	X	Պահպանված չէ	Խախտվել է "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 33-րդ կետով սահմանված պահանջը	Առաջարկվել է ընդունել համապատասխան որոշում	Եռամսյա ժամկետում

Դրույթների անվանումը

Դրույթների անվանումը	Պահպանված է	Թերի է պահպանված	Պահպանված չէ	Հայտնաբերված խախտումները	Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ	Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները
1	2	3	4	5	6	7
<p>Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու վերաբերյալ համայնքի ավագանուն ներկայացված առաջարկության առկայություն</p>	<p>X</p>	<p>X</p>	<p>Պահպանված չէ</p>	<p>Խախտվել է "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի առաջին մասի 10,1-րդ կետով սահմանված պահանջը</p>	<p>Առաջարկվել է հանդես գալ համապատասխան առաջարկությամբ</p>	<p>Երկամսյա ժամկետում</p>
<p>Օրենքով սահմանված կարգով համայնքի զարգացման քառամյա ծրագրի և (կամ) տարեկան բյուջեի նախագծերի վերաբերյալ հանրային բաց խումբեր և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման վերաբերյալ աշխատանքների առկայություն</p>	<p>X</p>	<p>X</p>	<p>Պահպանված չէ</p>	<p>Խախտվել է "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 33,1-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով սահմանված պահանջը</p>	<p>Առաջարկվել է այսուհետ կազմակերպել նմանատիպ խումբեր</p>	<p>Անհապաղ</p>
<p>Համայնքի ավագանու նիստերի օրակարգի ձևավորման գործընթացում ՏԻՄ օրենքի պահանջների պահպանման առկայություն</p>	<p>X</p>	<p>Թերի են պահպանված</p>	<p>X</p>	<p>Ավագանու անդամները գրավոր չեն տեղեկացվում, գրավոր ծանուցումների մասին նյութեր չկան: Տեղեկացումը կատարվում է բանավոր: Խախտվել են "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի պահանջները</p>	<p>Առաջարկվում է այսուհետ ապահովել ավագանու անդամների պատշաճ ծանուցումը</p>	<p>Անմիջապես</p>

Դրույթների անվանումը	Պահպանված է	Թերի է պահպանված	Պահպանված չէ	Հայտնաբերված խախտումները	Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ	Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները
1	2	3	4	5	6	7
<p>Համայնքի ղեկավարի անհատական ակտերի ընդունումից հետո օրենքով սահմանված երկօրյա ժամկետում ուղարկելու ավագանուն անդամներին ուղարկված լինելու, ինչպես նաև համայնքի ավագանու նստավայրում և բոլորի համար տեսանելի վայրում համայնքի ղեկավարի անհատական ակտերի փակցված լինելու արկայություն:</p>	X	Թերի է պահպանված	X	<p>Համայնքի ղեկավարի ոչ բոլոր անհատական ակտերի մասին է կատարվում ծանուցում: Խախտվել է "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի առաջին մասի 11 կետի պահանջը</p>	<p>Առաջարկվում է ապահովել համայնքի ղեկավարի իրավական անհատական ակտերի պատշաճ ծանուցումը ավագանու անդամներին</p>	<p>Երկամսյա ժամկետում</p>
<p>Համայնքի հողերի օգտագործման սխեմաները հաստատելու վերաբերյալ համայնքի ավագանու որոշման արկայություն:</p>			Պահպանված չէ	<p>Համայնքի հողերի օգտագործման սխեմա գոյություն չունի</p>	<p>Առաջարկվում է սահմանված կարգով և ժամկետներու մ ապահովել սխեմայի ձեռքբերումը</p>	